ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

ՍՄԿԿ XXV համագումարում կուսակցության Կենտկոմի գլխավոր քարտուղար ընկեր Լ. Ի. Բրեժնևը բարձր գնահատելով սովետական գիտնականների ավանդը սոցիալիստական շինարարության գործում, նրանց միաժամանակ կոչ արեց էլ ավելի ամրապնդել գիտության կապը կյանքի հետ, բազմակողմանիորեն նպաստել գիտության նվաճումները արտադրության մեջ ներդնելուն։

Հայաստանի գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը, որը տեղի ունեցավ հունիսի 16-ին, քննարկեց հանրապետության գիտության կենտրոնի հետագա անելիքները ՍՄԿԿ XXV համագումարի որոշումների լույսի տակ։

Զեկուցումով հանդես եկավ ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը։ Սովետական Հայաստանի գիտնականները, ասաց նա, լի են վճռականությամբ իրենց ողջ գիտելիքներն ի սպաս դնելու հանուն հայրենական գիտության զարգացման, գիտատեխնիկական առաջընթացի, սոցիալիստական հայրենիքի հետագա հզորացման։

Վ. Համբարձումյանը հանգամանորեն խոսեց ակադեմիայի գիտական հիմնարկների այն խնդիրների մասին, որոնք բխում են համագումարի որոշումներից։ Անհրաժեշտ է հետևողականորեն բարձրացնել գիտական հետազոտությունների արդյունավետությունը և որակը։ Իսկ դա նշանակում է կատարելագործել դրանց պլանավորումն ու կազմակերպումը, կոորդինացնել ակադեմիայի և գերատեսչական գիտական հիմնարկների գործունեությունը։ Պրեզիդենտն ընդգծեց, որ անհրաժեշտ է ռացիոնալ օգտագործել կադրերին և գիտության նյութատեխնիկական հնարավորությունները, արագացնել գիտության նվաճումների ներդրումը արտադրության մեջ, առաջին հերթին ձգտել ոչ թե գիտական աշխատողների քանակի ավելացմանը, այլ նրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը, հանձնարարված գործի նկատմամբ պատասխանատվության բարձրացմանը։

Մտքերի փոխանակությանը մասնակցեցին հանրապետության գիտությունների ակադեմիայի ֆիզիկա-տեխնիկական գիտությունների և մեխանիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Է. Միրզաբեկյանը, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Գ. Ղարիբյանը, հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ծ. Աղայանը, Երկրի մասին գիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Հ. Մաղաքյանը, հանրապետության գիտությունների ակադեմիայի իսկական անդամներ Մ. Ներսիսյանը, Գ. Սևակը, թղթակից-անդամ Ս. Միրզոյանը։

Ժողովը քննարկեց նաև այլ հարցեր։ Հաստատվեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի կանոնադրությունը։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի փոխ-պրեզիդենտ ընտրվեց ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Է. Միրզաբեկյանը։

Հայաստանի գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովի աշխատանքին մասնակցում էին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Գ. Արզումանյանը, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Կ. Դալլաքյանը, ՀԿԿ Երևանի քաղկոմի առաջին քարտուղար Լ. Ներսիսյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի տեղակալ Ռ. Սվետլովան, ՀԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ Յա. Խաչիկյանը։

(ԱՐՄԵՆՊՐՆՍ)